ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԴՈՂՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՄՐՑՈՒՅԹ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏԻ /ԾԱԾԿԱԳԻՐ՝ 3.1-1/ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Առաջատար մասնագետը աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ օրենքով սահմանված կարգով իրականացնում է հողի հարկի և գույքահարկի գանձումը, աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ մասնակցում է համայնքի հողերի գոտիավորման և օգտագործման սխեմայի կազմման աշխատանքներին , աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ մասնակցում է ինքնակամ հողազավթման կանխման, կասեցման և դրանց հետևանքների վերացման աշխատանքներին, աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ մասնակցում է սահմանված կարգով հողային հաշվեկշռի կազմման աշխատանքներին: Իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ: Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

_ միջնակարգ կրթություն

_ սույն պաշտոնի անձնագրի 10-րդ կետի բ. ենթակետում նշված իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն,

-համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար հայտարարված մրցույթը կկայանան 2016 թվականի մայիսի 10-ին՝ ժամը 12:00-ին ՝ Դողսի համայնքապետարանում, որը գտնվում է մշակույթի տան շենքում / հասցե՝ գ.Դողս, Բաղրամյան փ. 1-ին նրբանցք 6/:

Դիմող ՀՀ քաղաքացիները Դողսի համայնքապետարանի աշխատակազմ կամ ՀՀ Արմավիրի մարզպետարան պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

_ դիմում մրցույթային հանձնաժողովի անունով / ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս/

_ տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի պատճենները բնօրինակների հետ միասին,

_ հայտարարություն այն մասին, որ ինքը չի տառապում ՀՀ կառավարության 2005 թվականի մարտի 3-ի N 310 –Ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով,

_ հայտարարություն այն մասին, որ ինքը դատական կարգով չի ճանաչվել անգործունակ կամ սահմանափակ գործունակ,

_ արական սեռի անձիք զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասային կցագրման վկայականի պատճենները,

_ մեկ լուսանկար 3×4 չափսի,

_ անձնագրի պատճեն:

Մրցույթին մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարին ծանոթանալու համար կարող են դիմել ՀՀ Արմավիրի մարզի Դողսի համայնքապետարան / հեռ՝. 077-62-42-62/, ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչություն / հասցե՝ քաղ. Արմավիր , Աբովյան 71, հեռ.՝ 0237-2-07-70, - 2-76-49/:

Փաստաթղթերը ընդունվում են ամեն օր ժամը 10:00-ից 16:00, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Դիմումների ընդունման վերջնաժամկետն է ՝ 2016 թվականի ապրիլի 21-ը ներառյալ:

Գ.Դողս
2016 ապրիլի 4